



ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԷՐԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՊՏՀ գիտության բաժնի առաջավար մասնագետ,
միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի հայցորդ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՀԱՎԱՍԱՐԱԶԱՓ ԲԱՇԽՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՎ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Եկամուտների բաշխման հիմնախնդիրը գոյություն ունի մարդկության ողջ պատմության ընթացքում: Դա մշտապես տարբեր տնտեսագետների, քաղաքագետների ուշադրության կենտրոնում է:

Հետազոտությունում ուսումնասիրվել են աշխարհի, այդ թվում ԵԱՏՄ երկրների տնտեսական աճի և եկամուտների բաշխման ցուցանիշները: Նաև անդրադարձ է կատարվել COVID-19-ի հեղաշրջաններին գլոբալ անհավասարության համատեքստում:

Համավարակն իր ազդեցությունն է ունենալու տնտեսական ցուցանիշների վրա, որի հեղաշրջան էլ սպասվում է բնակչության եկամուտների և ծախսերի փոփոխություն, ինչպես նաև աղքատության մակարդակի աճ, ինչն էլ, իր հերթին, բացասաբար կանդրադառնա սոցիալական այլ ցուցանիշների վրա: Ճգնաժամին համաչափ արձագանքելը և երկրների հետագա զարգացումն ապահովելը ենթադրում են մի շարք սոցիալական ծրագրերի մշակում և իրականացում, որոնց ազդեցությանը միանշանակ գնահատական տալը բարդ է:

Հիմնաբառեր. տնտեսության կառուցվածքային տեղաշարժ, եկամուտների բաշխում, տնտեսական աճ, Զինիի համաթիվ

Ներածություն: Թեև համաշխարհային տնտեսությունը դանդաղորեն կայունանում է, սակայն դեռևս կան այնպիսի խնդիրներ, որոնք ռիսկային են և նոր որակի լուծումներ են պահանջում: Այդպիսի խնդիրներից է երկրների վարքագծի գնահատումը գլոբալ անհաշվեկշռվածության պայմաններում: Ավելացված արժեքի ստեղծման նպատակադրումը ենթադրում է տնտեսության կառուցվածքային տեղաշարժեր, որոնք, իրենց հերթին, գլոբալացման գործընթացների շարունակական խորացման պայմաններում ավելի են սրում երկրների միջև առկա անհավասարությունը: Մասնագիտական գրականության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ «...երկիրը, որում յուրաքանչյուրի եկամուտն աճում է դանդաղ, կարող է երջանիկ համարվել, իսկ այն երկիրը, որում միջին եկամուտն աճում է բավականին արագ, սակայն միաժամանակ մեծանում է եկամուտների անհավասարությունը, գնում է դեպի կործանում»¹:

Անհավասարության և եկամտի բաշխման հիմնախնդիրն այժմ արդիական է. այդ մասին է փաստում նաև այն, որ դա Նոբելյան հանձնաժողովի, ինչպես նաև համաշխարհային մի շարք հեղինակավոր տնտեսագետների ուշադրության կենտրոնում է²:

Շուրջ 101 երկրներում 1,3 մլրդ մարդ կամ բնակչության 23,1%-ն աղքատ է, որոնց 2/3-ն ապրում է միջին եկամուտ ունեցող երկրներում³: Երկրագնդի բնակչության գրեթե կեսը՝ 3,4 մլրդ մարդ, ապրում է օրական 5,5 ԱՄՆ դոլարից պակաս եկամտով: Մինչդեռ, աշխարհի ամենահարուստ բնակչության 1%-ի եկամուտները կրկնակի գերազանցում են 6,9 մլրդ մարդկանց եկամուտները⁴:

Oxfam-ի⁵ զեկույցի համաձայն՝ ֆինանսական ճգնաժամից ի վեր միլիարդատերերի թիվը գրեթե կրկնապատկվել է, իսկ նրանց, ինչպես նաև վերագային կորպորացիաների կողմից վճարման ենթակա հարկերի ընդհանուր գումարի տեմպերը նվազել են: Կտրուկ կրճատվել են նաև հարկային դրույքաչափերը. հարուստ երկրներում եկամտահարկի բարձր դրույքաչափը նվազել է՝ ներկայումս կազմում է 38% (1970-ականներին՝ 62%): Մինչդեռ աղքատ երկրներում եկամտահարկի միջին դրույքաչափը 28% է: Համեմատության համար նշենք, որ ամենահարուստների 1%-ի կողմից սեփական հարստության համար 0,5% հավելյալ հարկի վճարումը հնարավորություն կտա կրթելու 262 միլիոն երեխաների, ինչպես նաև կփրկի 3,3 միլիոն մարդու կյանք⁶:

COVID-19-ը ավելի է սրել առկա անհավասարությունները, և երկրներն ավելի խոցելի են դարձել հատկապես պարենային անապահովության համա-

¹ Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Եր., «Ձանգակ», 2014, էջ 157:

² Տե՛ս URL: <https://rg.ru/2019/10/14/nazvany-nobelevskie-laureaty-2019-goda-po-ekonomike.html>

³ Տե՛ս URL: http://hdr.undp.org/sites/default/files/mpi_2019_publication.pdf

⁴ Տե՛ս URL: <https://www.oxfam.org/en/what-we-do/issues/extreme-inequality-and-essential-services>

⁵ Oxfam (Oxford Committee for Famine Relief)-ը միջազգային ասոցիացիա է, որն իր կազմում ունի 19 կազմակերպություն՝ տեղակայված աշխարհի ավելի քան 90 երկրում: Ասոցիացիայի նպատակն է լուծել աղքատության և դրա հետ կապված անհավասարության հիմնախնդիրներն ամբողջ աշխարհում. URL: <https://www.oxfam.org/en/our-history>

⁶ Տե՛ս URL: <https://www.oxfam.org/en/press-releases/billionaire-fortunes-grew-25-billion-day-last-year-poorest-saw-their-wealth-fall>

տեքստում: Ներկայումս ի հայտ են եկել պարենային հիմնախնդիր ունեցող նոր երկրներ, ինչպիսիք են Հնդկաստանը, Հարավային Աֆրիկան, Բրազիլիան: Ըստ ՄԱԿ-ի հետազոտությունների՝ ճգնաժամի հետևանքով քաղցած մարդկանց թիվը 2020 թ., 2019 թ. համեմատությամբ, աճել է շուրջ 82%-ով՝ կազմելով 270 միլիոն⁷:

Գրականության ակնարկ: Եկամուտների համաչափ բաշխման հիմնախնդիրը մշտապես եղել է գիտնականների ուշադրության կենտրոնում: Դեռևս 18-րդ դարում ֆրանսիացի Ֆ. Քենեն (Quesnay Francois) ուսումնասիրել է եկամուտների բաշխման հարցերը⁸:

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին բնակչության տարբեր խմբերի միջև եկամտի բաշխումը փորձել են վերլուծել դասական դպրոցի ներկայացուցիչները⁹: Աղքատությունն ու հարստությունը դիտարկվում էին որպես տնտեսական զարգացման յուրօրինակ խթաններ, և միայն աշխատանքի արտադրողականության աճով էր հնարավոր վերացնել ծայրահեղ աղքատության դրսևորումները:

Ջ. Ս. Միլը (John Stuart Mill) առաջինն էր, ով իր աշխատություններում սկսեց կիրառել «սոցիալական արդարություն» եզրույթը: Նա նշում էր, որ բոլորը հավասար են, և փոխվել են այն ժամանակները, երբ սոցիալական բախումներ առաջանում էին միայն հասարակության այն շերտերում, որոնք ունեին որևէ սեփականության օբյեկտ: Քաղաքական որոշումների կայացման գործում ներառվեց նաև այն հասարակական շերտը, որը չունեի որևէ սեփականության միջոց, և որի համար այդ հաստատությունն արժեք ուներ միայն որպես հանրային բարիք¹⁰:

Իրենց հողվածներում բաշխման, եկամտային անհավասարության հարցերին են անդրադարձել Ջ.Ե. Ռոեմերը (J.E. Roemer) և Ալան Տրանոյը (Alain Trannoy),¹¹ ազգային եկամտի բաշխմանն են անդրադարձել Թոմաս Կ. Ռիմեսը (Thomas K. Rymes),¹² Ժոզեֆ Ջայդան (Joseph Zajda)¹³ և այլն:

⁷ Տե՛ս URL: <https://www.oxfam.org/en/world-brink-hunger-pandemic-coronavirus-threatens-push-millions-starvation>

⁸ Տե՛ս **Кэне Ф.**, Избранные экономические произведения. Издательство социально-экономической литературы. М., 1960. URL: https://docviewer.yandex.ru/view/0/?page=509&* =g1VAxzBXfHCygsKSoigCcx%2FyMpa97InVyBCI6Inl hLWRpc2stcHVibGJjOi8velJZY3dZNXJNTUIHWkiEb3Z6Nnp5dWllyURDN1FKMW5ndzgaG1oUGZqMFZ6OTluMzZOcllyd1cycFZGTkdYMXEvSjZicG1SeU9Kb25UM1ZvWG5EYwC9PSIsInRpdGxlljoi0JrQtdC90Y0gOKTRgNCwOL3RgdGDOLAgLSDQmNC30LHRgNCwOL3QvdC%2BOLUgMTk2MC5kanZ1liwibm9pZnJhbWUjOmZhbnHNLClJ1aWQjOiwliwidHMIOjE1ODk5MDYwOTQ2NTEsIn1IjoiODA5OTE5NTA3MTU2MDkzMDExOSJ9

⁹ Տե՛ս Smith A., An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, The Modern Library, Random House, 1937. URL: <https://www.marxists.org/reference/archive/smith-adam/works/wealth-of-nations/>

¹⁰ Տե՛ս Mill J. S., The Collected Works of John Stuart Mill, Volume V - Essays on Economics and Society Part II (Chapters of Socialism), 1850. URL: <https://oll.libertyfund.org/titles/mill-the-collected-works-of-john-stuart-mill-volume-v-essays-on-economics-and-society-part-ii>

¹¹ Տե՛ս Roemer J. E., Trannoy A., Equality of opportunity, Cowles Foundation Discussion Paper No. 1921, October 2013, URL: <https://cowles.yale.edu/sites/default/files/files/pub/d19/d1921.pdf>

¹² Տե՛ս Rymes T. K., On Concepts of Capital and Technological Change, Cambridge University Press, 1971:

¹³ Տե՛ս Zajda J., Globalization, Education and Social Justice, 2010:

Եկամուտների բաշխման ուսումնասիրություններում ազգային մակարդակից աստիճանաբար անցում կատարվեց համաշխարհային մակարդակի: 21-րդ դարի սկզբին մշակվեցին աշխարհի բնակչության միջև եկամուտների բաշխման անհամամասնության գնահատման մոտեցումներ: Առաջ քաշվեց «գլոբալ անհաշվեկշռվածություն» հասկացությունը՝ նշելով աշխարհի բնակչության միջև անհավասարության մակարդակը: Վերջինիս գնահատման նպատակով որպես մեկ միասնական ինդեքս կիրառվում է Ջինիի գործակիցը կամ Ջինիի համաթիվը, որը ցույց է տալիս հասարակության շերտավորման աստիճանը: Այս վիճակագրական մոդելն առաջարկել և մշակել է իտալացի վիճակագիր և ժողովրդագիր Կորադո Ջինին (Corrado Gini) 1912 թվականին¹⁴:

Եկամուտների բաշխման հիմնախնդրի ուսումնասիրումը նաև մի շարք միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում է՝ որպես վերջիններիս ռազմավարական նպատակների բաղկացուցիչ մաս: ՄԱԿ-ի Կայուն զարգացման 17 նպատակներից է երկրների անհավասարության մակարդակի կրճատումը և այլն¹⁵:

Իրենց աշխատություններում հիմնախնդրին անդրադարձել են նաև հայ հեղինակներ (Գ. Ղարիբյան¹⁶, Ա. Մարկոսյան, Ն. Գեղամյան¹⁷ և այլք)՝ առանձնացնելով ոլորտին առնչվող մի շարք հիմնախնդիրներ:

Տնտեսագիտության 2019 թվականի Նոբելյան մրցանակը շնորհվել է Աբիջիտ Բաներջին (Abhijit Banerjee), Էսթեր Դյուֆլոյին (Esther Duflo) և Մայքլ Կրեմերին (Michael Kremer)՝ համաշխարհային աղքատության դեմ պայքարի հարցում փորձարարական մոտեցման մշակման համար: Ինչպես նշում է Նոբելյան կոմիտեն, նրանց հետազոտություններն օգնել են նվազեցնելու համաշխարհային աղքատությունը և մեծ ներուժ ունեցել՝ բարելավելու մոլորակի ամենաաղքատ բնակչության կյանքի պայմանները¹⁸: Դափնեկիրները ներկայացրել են նոր մոտեցում՝ նշված խնդիրը մեղմելու նպատակով: Դա փուլային գործընթաց է. հիմնախնդիրը բաժանվել է փոքր և կառավարելի հարցերի: Վերջիններիս ուսումնասիրումն ու վերլուծությունն էլ կապահովի համաշխարհային հանրության առջև ծառայած մարտահրավերի լուծումը¹⁹:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության իրականացման ժամանակ օգտագործվել են համակարգային մոտեցման և համեմատական վերլուծության ու համադրման, տվյալների բազաների վիճակագրական վերլուծության և պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության մեթոդները:

Թեմայի ուսումնասիրության համար որպես տեսական, մեթոդաբանական հիմք են ծառայել ինչպես համաշխարհային կազմակերպությունների

¹⁴ Տե՛ս URL: http://www.fao.org/docs/up/easypol/329/gini_index_040en.pdf

¹⁵ Տե՛ս URL: <https://www.un.org/sustainabledevelopment/inequality/>

¹⁶ Տե՛ս **Ղարիբյան Գ., Խառատյան Ա., Իսահակյան Ռ.**, Անկախության տարիներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերադարձի հիմնախնդիրները, ԵՊՀ, 2017, էջ 78-119:

¹⁷ Տե՛ս URL: <https://cyberleninka.ru/article/n/neravenstvo-v-raspredelenii-dohodov-naseleniya-v-kontekste-ehkonomicheskoy-bezopasnosti/viewer>

¹⁸ Տե՛ս URL: <https://twitter.com/NobelPrize/status/1183681045591445504>

¹⁹ Տե՛ս URL: https://aif.ru/society/science/kto_takie_abidzhit_banerdzhi_ester_dyuflo_i_maykl_kremer

ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, այնպես էլ մասնավոր ընկերությունների ու ասոցիացիաների՝ Oxford Committee for Famine Relief-ի, Allianz Group-ի հրապարակումները և տվյալները:

Հետազոտությունում եկամուտների կենտրոնացման գործակցի (Ջինիի համաթիվ) ընտրությունը պայմանավորված է վերջինիս լայն կիրառությամբ, քանի որ դա հաշվարկվում է գրեթե բոլոր երկրներում և համեմատական վերլուծության լավագույն գործիքներից է: Ջինիի գործակիցը բնակչության եկամուտների բաշխման փաստացի ծավալի շեղումն է դրանց հավասարաչափ բաշխման գծից և, ի տարբերություն անհավասարության մյուս համաթվերի, հաշվի է առնում յուրաքանչյուր անհատի եկամտի շեղումը ոչ միայն միջին եկամտի մակարդակից, այլ նաև մյուս բոլոր անհատների եկամուտների մակարդակից²⁰:

Վերլուծության մեջ կիրառվել է նաև ֆոնդերի գործակիցը (եկամտի տարբերակման գործակից), որը բնութագրում է սոցիալական շերտավորման աստիճանը և ցույց է տալիս ամենաբարձր և ամենացածր եկամուտներ ունեցող բնակչության 10%-ի դրամական եկամուտների միջին մակարդակների հարաբերակցությունը:

Վերլուծություն: Համաշխարհային տնտեսության զարգացումն ուղեկցվում է կառուցվածքային տարբեր փոփոխություններով, որոնք էական ազդեցություն են ունենում եկամուտների բաշխման երկարաժամկետ փոփոխությունների վրա:

Տնտեսական աճը եղել և շարունակում է մնալ աղքատության նվազեցման հիմնական շարժիչ ուժը: Եկամուտների բաշխման ազդեցությունը տնտեսական աճի վրա զարգացած երկրների դեպքում դրական է, իսկ զարգացողների դեպքում՝ բացասական²¹:

Եկամուտների բաշխման և տնտեսական աճի փոխազդեցության վերաբերյալ որոշ ուսումնասիրություններ փաստում են, որ այս ցուցանիշների միջև կապի բացասական կամ դրական լինելը պայմանավորված է տարբեր գործոններով, այդ թվում՝ դիտարկվող ժամանակահատվածով, վիճակագրական տվյալների հավաստիությամբ և այլն²²:

Համաշխարհային տնտեսական աճի դանդաղմամբ պայմանավորված՝ աշխարհի տարածաշրջանների մեծ մասում եկամուտներն աճում են ցածր տեմպերով, իսկ աղքատ երկրներում՝ նվազում:

Ֆինանսական ճգնաժամին հաջորդող ժամանակահատվածում (2012-2016 թթ.) համաշխարհային տնտեսական աճը, առաջին հայացքից, կայուն է թվում, սակայն դա քողարկում է մի շարք ռիսկեր: Թեև 2017-2018 թթ. աշ-

²⁰ Տե՛ս Jurkatis S., Strehl W., Gini decompositions and Gini elasticities: On measuring the importance of income sources and population subgroups for income inequality, School of Business & Economics, Discussion Paper, Berlin, 2014, էջ 2-11:

²¹ Տե՛ս Barro R. J., Inequality and Growth in a Panel of Countries, Journal of Economic Growth, Vol. 5, Issue 1, 2000, էջ 5-32. URL: <https://scholar.harvard.edu/barro/publications/inequality-and-growth-panel-countries>

²² Տե՛ս Knowles S., Inequality and Economic Growth: The Empirical Relationship Reconsidered in the Light of Comparable Data, Centre for Research in Economic Development and International Trade, University of Nottingham, 2001. URL: <http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.199.611&rep=rep1&type=pdf>

խարհի երկրների մեծ մասում ՀՆԱ-ն աճեց, և շատ երկրներում աճը մոտ էր իր հնարավոր առավելագույնին, մի քանի զարգացած երկրներում գործազրկության մակարդակը հասավ ռեկորդային ցածր մակարդակի, արդյունքում՝ համաշխարհային աճը 2018 թ. գրեթե կայուն մնաց՝ 2.9% (2017 թ.՝ 3.3%), քանի որ մի շարք խոշոր տնտեսություններում դանդաղ աճը փոխհատուցվում էր ԱՄՆ-ի տնտեսության ավելի արագ աճով՝ հարկաբյուջետային միջոցառումների շնորհիվ:



Աղբյուրը՝ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG>, Allianz Wealth Report 2010-2020

Գծապատկեր 1. Համաշխարհային ՀՆԱ աճը (%) և համաշխարհային ֆինանսական ակտիվների շարժը 2009-2019 թթ., մլրդ եվրո

2019 թ. առևտրային վեճերի սրման, ֆինանսական դժվարությունների և անկայունության ռիսկի բարձրացման, ինչպես նաև աշխարհաքաղաքական լարվածության համատեքստում շատ երկրներում տնտեսական աճի որոշակի դանդաղում գրանցվեց, որի հետևանքով համաշխարհային աճը կազմեց 2.3% (գծապատկեր 1)²³:


Միջին եկամուտ ունեցող երկրներում տնտեսական աճի դանդաղումը հանգեցրեց միջին խավի կենսամակարդակի անկման, և այդ խավի ներկայացուցիչներից շատերը համարեցին աղքատների շարքը, որով էլ ավելի մեծացավ հարուստների և աղքատների միջև անհավասարությունը: 2000 թ. զարգացած երկրներում մեկ շնչին բաժին ընկնող զուտ ֆինանսական ակտիվների ցուցանիշները, միջին հաշվով, 87 անգամ ավելի բարձր էին, քան զարգացող երկրներում: Այս հարաբերակցությունը մինչև 2016 թ. աստիճանաբար նվազել է՝ կազմելով 19, այնուհետև կրկին բարձրացել՝ հասնելով 22-ի (2019 թ.): Տատանումը հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ աշխարհում առաջին անգամ զգալիորեն նվազեց միջին եկամուտ

²³ URL: <https://www.un.org/development/desa/dpad/publication/%D0%BC%D0%B8%D1%80%D0%BE%D0%B2%D0%BE%D0%B5-%D1%8D%D0%BA%D0%BE%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B8%D1%87%D0%B5%D1%81%D0%BA%D0%BE%D0%B5-%D0%BF%D0%BE%D0%BB%D0%BE%D0%B6%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5-%D0%B8-%D0%BF%D0%B5-2/>

ունեցող բնակչության թիվը՝ 2018 թ. 1 մլրդ մարդուց 2019 թ. դառնալով 800 միլիոն:

Դիտարկելով դարասկզբից սկսված զարգացումը, կարելի է փաստել, որ զարգացող երկրների վերելքը, այնուամենայնիվ, տպավորիչ է: Բնակչության աճին զուգահեռ, համաշխարհային տնտեսությունում միջին եկամուտ ունեցողների տեսակարար կշիռն աճեց գրեթե 50%-ով, բարձր եկամուտ ունեցողներինը՝ 30%-ով, իսկ ցածր եկամուտ ունեցողների տեսակարար կշիռը նվազեց գրեթե 10%-ով: Չնայած այս առաջընթացին՝ աշխարհում ամենահարուստների 10%-ը՝ 520 միլիոն մարդ, միասին տիրապետում են ընդհանուր զուտ ֆինանսական ակտիվների շուրջ 84%-ին²⁴:

Համաշխարհային տնտեսության մեջ մասնավոր տնային տնտեսությունների համախառն ֆինանսական ակտիվները 2019 թ. գերազանցեցին անվանական ՀՆԱ-ն գրեթե հինգ տոկոսային կետով: Որպես հետևանք՝ 2019 թ. վերջին համաշխարհային ֆինանսական ակտիվները կազմեցին ընդհանուր անվանական ՀՆԱ 270%-ը (գծապատկեր 1): Ակտիվների և ՀՆԱ հարաբերակցությունը դեռևս ցածր է 2017 թ. ցուցանիշից (275%), որի հիմնական պատճառը 2018 թ. արձանագրված անկումն է ²⁵:



Աղբյուրը՝ <https://data.worldbank.org/indicator/NY.ADJ.NNTY.PC.KD.ZG>

Գծապատկեր 2. Ծճգրտված զուտ ազգային եկամուտը մեկ շնչի հաշվով 2000-2018 թթ., %

Ուսումնասիրելով աշխարհում, ինչպես նաև մի շարք երկրներում ճճգրտված զուտ ազգային եկամուտը (Adjusted net national income), որը, որպես կանոն, նույնականացվում է եկամուտը հասկացության հետ և ավելի լավ է բնութագրում այդ հասկացությունը, կարելի է նշել, որ 2000-2018 թթ. այդ ցուցանիշի աճ է գրանցվել՝ որոշ բացառություններով: Այսպես՝ 2009 թ. ցուցանիշը նվազել է գրեթե բոլոր երկրներում, բացառությամբ՝ Ճապոնիայի

²⁴ Տե՛ս URL: https://www.allianz.com/en/economic_research/publications/specials_fmo/23092020_AllianzWealthReport2020.html
²⁵ Տե՛ս Allianz Global Wealth Report 2020, Allianz Research, 23 September 2020, URL: https://www.allianz.com/content/dam/onemarketing/azcom/Allianz_com/economic_research/publications/specials/en/2020/september/2020_09_23_AllianzWealthReport2020.pdf

(2,36% աճ), Չինաստանի (12,87% աճ) և Բրազիլիայի (0,05% աճ), իսկ 2018 թ. աշխարհում աճել է 4.79%-ով՝ կազմելով 9290,35 ԱՄՆ դոլար (զծապատկեր 2):

Երկրների եկամուտների միջև առկա անհավասարությունը, ինչպես նաև բարեկեցությունը հաշվարկելու համար կարևոր նշանակություն ունի նաև բնակչության (տնային տնտեսությունների) բաժանումը հավասար խմբերի, որը թույլ կտա համապատասխան ցուցանիշների օգնությամբ հաշվարկել անհավասարության մակարդակը:

Անդրադառնալով տարածաշրջանին՝ կարող ենք նշել, որ Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 4-րդ հոդվածում ամրագրված է. «ԵԱՏՄ գործունեության հիմնական նպատակներից մեկն է ստեղծել պայմաններ անդամ երկրների տնտեսությունների կայուն զարգացման համար՝ նրանց բնակչության կենսամակարդակը բարելավելու նպատակով»²⁶:

2019 թ., 2018 թ. համեմատությամբ, Ռուսաստանում և Ղրղզստանում գրանցվել է եկամտի տարբեր մակարդակ ունեցող բնակչության խմբերում առկա անհավասարության նվազում, Ղազախստանում և Բելառուսում փոփոխություն չի նկատվել: Միայն ԵԱՏՄ անդամ մեկ երկրում գրանցվել է անհավասարության փոքր աճ: Բնակչության ամենահարուստ և ամենաաղքատ խմբերի եկամուտների միջև անջրպետը (ըստ դեցիլային խմբերի եկամուտների հարաբերակցության) Ռուսաստանում նվազել է՝ 2018 թ. 15,6-ից 2019 թ. դառնալով մինչև 15,4 անգամ, Ղրղզստանում՝ 11,7-ից՝ 10,6 անգամ: Հայաստանում բնակչության ամենահարուստ և ամենաաղքատ խմբերի եկամուտների հարաբերակցությունը 2018 թ. եղել է 15,4 անգամ, 2019 թ.՝ 17,4 անգամ, ինչը վկայում է բնակչության սոցիալական շերտավորման աստիճանի բարձրացման մասին:

Նյութական բարեկեցության առումով, բնակչության անհավասարության դրսևորման ձևերից է նաև աղքատության մակարդակը: 2015 թ. ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներն ընդունեցին ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգը»²⁷, համաձայն որի՝ պետք է հատուկ ուշադրություն դարձնել աղքատության և անհավասարության նվազեցման խնդրին: Ազգային մեթոդաբանությունների տարբերության պատճառով ԵԱՏՄ անդամ պետությունների տվյալները, աղքատության տեսանկյունից, ընդհանուր առմամբ, համադրելի չեն, բայց դրանք ներկայացուցչական են մեկ պետության ներսում ցուցանիշի դինամիկան վերլուծելիս: Համաձայն ազգային մեթոդաբանության՝ 2019 թ. Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 26,4%, Բելառուսում՝ 5,0%, Ղազախստանում՝ 4,3%, Ղրղզստանում՝ 20,1%, Ռուսաստանում՝ 12,3%: 2019 թ., 2018 թ. համեմատությամբ, ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներում, բացառությամբ Հայաստանի, աղքատության մակարդակը նվազել (Բելառուսում՝ 0,6 տոկոսային կետով, Ռուսաստանում՝ 0,3, Ղրղզստանում՝ 2,3) կամ մնացել է նույնը (Ղազախստան): Հայաստանում 2019 թ., 2018 թ. համեմատությամբ, աղքատության մակարդակի աճ է արձանագրվել 2,9 տոկոսային կետով, սակայն ՀՆԱ-ն նախորդ տարվա ցուցանիշի համեմատությամբ աճել է

²⁶ URL: <https://docs.eaeunion.org/en-us>

²⁷ Տե՛ս URL: <https://www.un.am/hy/p/sdgs-in-general>

2,4%-ով: Պատճառն աղքատության գծի, ինչպես նաև սպառման և աղքատության գնահատման մեթոդաբանության փոփոխությունն է, ուստի 2018 և 2019 թվականների աղքատության մակարդակները համադրելի չեն (աղյուսակ 1):

Նոր համավարակը փլուզեց համաշխարհային կայունության մասին պատկերացումները և ավելի ընդգծեց հարուստների ու աղքատների միջև առկա տարբերությունը՝ մատնանշելով համաշխարհային ընդգրկմամբ անհավասարության հետագա խորացման հիմքերը:

Ըստ փորձագիտական գնահատականների՝ COVID-19-ի պատճառով համաշխարհային տնտեսությունում առաջացած ճգնաժամի հետևանքով համաշխարհային ՀՆԱ-ն կնվազի 2.1%-ով: Զարգացող երկրների ՀՆԱ-ն կնվազի 2.5%-ով, իսկ բարձր եկամուտ ունեցող երկրներինը՝ 1.9%-ով²⁸:

Համավարակի հետևանքով աշխարհն արդեն իսկ կրել է եկամտի զանգվածային կորուստներ: Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության փորձագետների՝ երկրների կողմից իրականացվող հարկաբյուջետային խթանիչ գործողություններն էլ ավելի են մեծացնելու անհավասարությունը հարուստ և աղքատ երկրների միջև: 2020 թ. առաջին երեք եռամսյակների ընթացքում աշխատուժի համաշխարհային եկամուտը կրճատվել է 10,7%-ով կամ 3,5 տրիլիոն ԱՄՆ դոլարով: Աշխարհում առավել տուժել են Հյուսիսային և Հարավային Ամերիկա տարածաշրջանները. բնակչության աշխատանքային եկամուտները նվազել են 12,1%-ով: Մինչդեռ, Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում այդ ցուցանիշը կազմել է 10,6%: Ամենամեծ կորուստները գրանցվել են միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում: Վերջիններում բնակչության եկամտի կորուստը 15,1% է, իսկ հարուստ երկրների եկամտի կորուստը՝ 9%: Ինչպես նշում է ԱՄԿ-ն, հարուստ երկրների իշխանություններն արդյունավետ միջոցներ են ձեռնարկել տնտեսությունը խթանելու համար, այնինչ, միջինից ցածր եկամուտ ունեցող, ինչպես նաև աղքատ երկրները միջոցներ չունեն պահանջվող ծավալի միջոցառումներ իրականացնելու համար²⁹:

Անկասկած է, որ համավարակի ավարտից հետո երկրները կփնտրեն համաշխարհային աղետների կանխարգելման և/կամ չեզոքացման համընդհանուր կառուցակարգեր, մուլտիլատերիզմը կամրապնդվի համաշխարհային քաղաքականության մեջ՝ երկրներին «հետ մղելով» դեպի ԱՄՆ կողմնորոշված գլոբալացման երևույթներից: Իսկ արդեն ճգնաժամից հետո, որը կխաթարի ԱՄՆ-ի և ԵՄ-ի նկատմամբ վստահությունը, առավել հստակ կդառնա Արևելքի դերն աշխարհում՝ Չինաստանի, Ռուսաստանի, Հնդկաստանի ու Իրանի համար ապահովելով գործողությունների էական ազատություն³⁰:

²⁸ Տե՛ս URL: <http://documents.worldbank.org/curated/en/295991586526445673/pdf/The-Potential-Impact-of-COVID-19-on-GDP-and-Trade-A-Preliminary-Assessment.pdf>

²⁹ Տե՛ս URL: <https://news.un.org/ru/story/2020/09/1386592>

³⁰ Տե՛ս **Հախվերդյան Դ.**, Համավարակ. գլոբալացման վախճան. թե՞ պետության դերի վերաիմաստավորում, «Ամբերդ» տեղեկագիր, 2020/3, Եր., «Տնտեսագետ», 2020, էջ 5-15:

Սոցիալ-տնտեսական իրավիճակը ԵԱՏՄ երկրներում 2014-2019 թթ.³¹

	2014			2015			2016			2017			2018			2019		
	Կոմունիստական դոմինանտ	Կոմունիստական դոմինանտ	Նվազեցող վիճակ	Կոմունիստական դոմինանտ	Կոմունիստական դոմինանտ	Նվազեցող վիճակ	Կոմունիստական դոմինանտ	Կոմունիստական դոմինանտ	Նվազեցող վիճակ	Կոմունիստական դոմինանտ	Կոմունիստական դոմինանտ	Նվազեցող վիճակ	Կոմունիստական դոմինանտ	Կոմունիստական դոմինանտ	Նվազեցող վիճակ	Կոմունիստական դոմինանտ	Կոմունիստական դոմինանտ	
Ռուսաստան	11,3	15,8	0,415	13,4	15,5	0,412	13,2	15,5	0,412	12,9	15,4	0,411	12,6	15,6	0,413	12,3	15,4	0,411
Ղազախստան	2,9	5,7	0,278	2,6	5,6	0,278	2,5	5,6	0,278	2,7	5,9	0,287	4,3	6,0	0,289	4,3	6,0	0,290
Բելառուս	4,8	6,0	0,275	5,1	6,1	0,276	5,7	6,3	0,279	5,9	5,9	0,269	5,6	6,0	0,275	5,0	6,0	0,272
Հայաստան	30,0	16,6	0,373	29,8	16,4	0,374	29,4	17,5	0,375	25,7	16,8	0,359	23,5	15,4	0,360	26,4	17,4	0,381
Դրոզդստան	30,6	17,2	0,429	32,1	11,8	0,408	25,4	14,3	0,406	25,6	12,9	0,392	22,4	11,7	0,378	20,1	10,6	0,364

³¹ URL: http://www.eurasiancommission.org/ru/act/integr/_i_makroec/dep_stat/econstat/Pages/living_standard.aspx, <https://www.armstat.am/file/doc/99521168.pdf>

Աղյուսակում ներկայացված են ԵԱՏՄ անդամ երկրների ազգային մեթոդաբանության.

Ռուսաստանում՝ կենսապահովման մակարդակից ցածր դրամական եկամուտ ունեցող բնակչության մասնաբաժինը.

Ղազախստանում՝ կենսապահովման մակարդակից ցածր ապառույթից ցածր ապառույթից ունեցող բնակչության մասնաբաժինը.

Բելառուսում՝ կենսապահովման մակարդակից ցածր առկա ռեսուրսներ ունեցող բնակչության մասնաբաժինը.

Հայաստանում՝ ընդհանուր աղքատության վերին շեմից ցածր ապառույթ ունեցող բնակչության մասնաբաժինը.

Դրոզդստանում՝ աղքատության շեմից ցածր ապառույթից ցածր ապառույթից ունեցող բնակչության մասնաբաժինը.

Ընդդրանքային երկրների մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում 2020 թ.³²

N	Հարգացած երկրներ	Համաշխարհային ՀՆԱ մասնաբաժին (%)	Կշիռ	N	Հարգացող երկրներ	Համաշխարհային ՀՆԱ մասնաբաժին (%)	Կշիռ
1	ԱՄՆ	24.8	0.454554	1	Չինաստան	18.2	0.534697
2	Ճապոնիա	5.86	0.107407	2	Հնդկաստան	3.09	0.090781
3	Գերմանիա	4.51	0.082663	3	Կորեա	1.89	0.055526
4	Մեծ Բրիտանիա	3.15	0.057736	4	Ռուսաստան	1.75	0.051413
5	Ֆրանսիա	3.04	0.055719	5	Բրազիլիա	1.63	0.047888
6	Իտալիա	2.2	0.040323	6	Ինդոնեզիա	1.3	0.038193
7	Կանադա	1.91	0.035008	7	Մեքսիկա	1.24	0.036643
8	Ավստրալիա	1.59	0.029143	8	Եգիպտոս	0.432	0.012692
9	Իսպանիա	1.49	0.02731	9	Թուրքիա	0.775	0.022769
10	Նիդերլանդներ	1.06	0.019429	10	Չիլի	0.293	0.008608
11	Շվեյցարիա	0.844	0.015469	11	Իրան	0.728	0.021388
12	Շվեդիա	0.631	0.011565	12	Լեհաստան	0.693	0.02036
13	Բելգիա	0.6	0.010997	13	Չեխիա	0.289	0.008491
14	Ավստրիա	0.516	0.009458	14	Նիգերիա	0.528	0.015512
15	Իռլանդիա	0.476	0.008725	15	Արգենտինա	0.457	0.013426
16	Նորվեգիա	0.437	0.00801	16	Ֆիլիպիններ	0.438	0.012868
17	Իսրայիլ	0.457	0.008376	17	Բելառուս	0.072	0.002115
18	Դանիա	0.405	0.007423	18	Ղազախստան	0.207	0.006081
19	Պորտուգալիա	0.264	0.004839	19	Ղրղզստան	0.01	0.000294
20	Ֆինլանդիա	0.319	0.005847	20	Հայաստան	0.016	0.00047
		54.559	1			34.038	1


³² URL: <http://statisticstimes.com/economy/projected-world-gdp-ranking.php>

Վերլուծությունն ամբողջացնելու նպատակով փորձել ենք անդրադառնալ զարգացող և զարգացած երկրների բարեկեցության մակարդակի փոփոխությանը՝ հիմք ընդունելով Զինիի գործակիցը: Զարգացած և զարգացող երկրների խմբերը ներառում են 20-ական երկրներ, իսկ երկրների ընտրությունը կատարվել է՝ հիմք ընդունելով վերջինների մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում: Այնուհետև երկրները կշռվել են յուրաքանչյուր խմբի ներսում (աղյուսակ 2): Հետազոտության համար որպես տեղեկատվական հիմք են հանդիսացել Համաշխարհային բանկի տվյալները, իսկ դրանք ամբողջացնելու նպատակով կատարվել են հաշվարկներ՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր երկրի տվյալ ցուցանիշի հավելաճի տեմպերը:


Հաշվարկները ցույց են տալիս, որ վերջին 20 տարիների ընթացքում տնային տնտեսությունների եկամուտների անհավասարությունը (Զինիի գործակից) զարգացած երկրներում, միջին հաշվով, աճել է 5.94%-ով, իսկ զարգացող երկրներում կրճատվել է մոտ 0.4%-ով (գծապատկեր 3, 4):

Ավելին, պետք է նշել, որ 1980-ականների ընթացքում անհավասարության օրինաչափությունները էապես տարբերվում են հաջորդող տասնամյակների օրինաչափություններից, և վերջիններիս նպաստող գործոնները ժամանակի ընթացքում փոխվել են, մասնավորապես՝ ոչ աշխատանքային եկամուտների մասով:

Այս ամենի հիմքում առկա փոփոխվող գործընթացները դժվարացրել են ամբողջ ժամանակահատվածում նշանակալի անհավասարության որոշիչները:



Գծապատկեր 3. Զարգացած երկրների խմբի բարեկեցությունը (Զինիի գործակից) 2000-2023 թթ.



Գծապատկեր 4. Զարգացող երկրների խմբի բարեկեցությունը (Զինիի գործակից) 2000-2023 թթ.

Արդյունքները ցույց են տալիս, որ թեև զարգացող երկրներում մերձեցման հստակ միտում կա, և դա արտահայտվում է այն փաստով, որ Ջինիի համաթիվը շարունակաբար նվազում է՝ 2018 թ. 41.07%-ից 2000 թ. հասնելով 40.1-ի, սակայն, ուսումնասիրելով 2012-2017 թթ. ժամանակաշրջանը, կարելի է նշել, որ զարգացող երկրներն ավելի զգայուն են համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քան զարգացած երկրները:

Անդրադառնալով յուրաքանչյուր խմբին՝ կարող ենք նշել, որ զարգացող երկրներում ավելի սուր է եկամուտների բաշխման հիմնախնդիրը, որը աստիճանաբար ավելի է խորանալու:

Եզրակացություններ: Այսպիսով՝ COVID-19 համավարակի հետևանքով աշխարհի բոլոր տնտեսությունները խոցելի են, երկրների միջև մեծացող անհավասարությունը բացասաբար է ազդում տնտեսական աճի վրա, վտանգում է սոցիալական համախմբվածությունը՝ մեծացնելով հարուստների և աղքատների միջև անհավասարությունը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ եկամուտների հավասարաչափ բաշխում, որպես այդպիսին, հնարավոր չէ, քանի որ հանգեցնում է տնտեսական արդյունավետության նվազման:

Եկամուտների բաշխման հիմնախնդրի ուսումնասիրության մոտեցումները փոփոխվում են՝ ելնելով յուրաքանչյուր ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկություններից:

Ինչպես ցույց տվեց վերլուծությունը, տնտեսական աճի և եկամուտների բաշխման միջև առկա կապը միանշանակ չէ, և հստակ հնարավոր չէ կանխատեսումներ կատարել, սակայն փաստ է, որ վերջին շրջանում լայն տարածում գտած COVID-19 համավարակի հետևանքով երկրներից շատերը կբախվեն բացասական երևույթների:

Ըստ կատարված կանխատեսումների՝ երկրների բարեկեցության մակարդակը կնվազի 0.4%-ով:

Այնուամենայնիվ, նախորդ ժամանակաշրջանների ճգնաժամերի հաղթահարումը թույլ է տալիս եզրակացնել, որ երկրներն այս ճգնաժամից կարող են ավելի քիչ կորուստներ ունենալ՝ հիմնվելով համաշխարհային տնտեսությունում կիրառված փորձի վրա: Իսկ եկամուտների բաշխվածությանը, ինչպես նաև կյանքի որակի բարձրացմանը կարող է նպաստել միայն հստակ ձևակերպված սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, որը հաշվի է առնում ազգային կարիքները և ուղղված է ընդհանուր տնտեսությունների կայուն զարգացմանը:

Աշխարհում հաշվեկշռվածության, հետևաբար նաև բարեկեցության հասնելը հնարավոր կլինի դրանց փոխադարձ համակարգման շնորհիվ:

Օգտագործված գրականություն

1. Հախվերդյան Դ., Համավարակ. գլոբալացման վախճա՞ն, թե՞ պետության դերի վերաիմաստավորում, «Ամբերդ» տեղեկագիր, 2020/3, Եր., ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, 2020, էջ 5-15:
2. Ղարիբյան Գ., Խառատյան Ա., Իսահակյան Ռ., Անկախության տարիներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսա-

- կան զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները, ԵՊՀ, 2017:
3. Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Եր., «Զանգակ», 2014:
 4. Кэне Ф., Избранные экономические произведения. Издательство социально-экономической литературы. М., 1960.
 5. Allianz Global Wealth Report 2020, Allianz Research, 23 September, 2020, URL: https://www.allianz.com/en/economic_research/publications/specials_fmo/23092020_AllianzWealthReport2020.html
 6. Barro R. J., Inequality and Growth in a Panel of Countries, Journal of Economic Growth, Vol. 5, Issue 1, 2000.
 7. Hakhverdyan D.N., Cyclical Interrelation of National Economies and Origins of Global Economic Crisis, Journal of Economy and entrepreneurship, N 12(53), 2014.
 8. Jurkatis S., Strehl W., Gini Decompositions and Gini Elasticities: On Measuring the Importance of Income Sources and Population Subgroups for Income Inequality, School of Business & Economics, Discussion Paper, Berlin, 2014.
 9. Knowles S., Inequality and Economic Growth: The Empirical Relationship Reconsidered in the Light of Comparable Data, Centre for Research in Economic Development and International Trade, University of Nottingham, 2001.
 10. Mill J. S., The Collected Works of John Stuart Mill, Volume V - Essays on Economics and Society Part II (Chapters of Socialism), 1850.
 11. Roemer J. E., Trannoy A., Equality of Opportunity, Cowles Foundation Discussion Paper No. 1921, October, 2013.
 12. Rymes T. K., On Concepts of Capital and Technological Change, Cambridge University Press, 1971.
 13. Smith A., An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, The Modern Library, Random House, 1937.
 14. Zajda J., Globalization, Education and Social Justice, 2010.
 15. <http://documents.worldbank.org/curated/en/295991586526445673/pdf/The-Potential-Impact-of-COVID-19-on-GDP-and-Trade-A-Preliminary-Assessment.pdf>
 16. http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Documents/householdincome_2018.pdf
 17. http://www.fao.org/docs/up/easypol/329/gini_index_040en.pdf
 18. https://aif.ru/society/science/kto_takie_abidzhit_banerdzhi_ester_dyuflo_i_maykl_kremer
 19. <https://cowles.yale.edu/sites/default/files/files/pub/d19/d1921.pdf>
 20. <https://docs.eaeunion.org/en-us>
 21. <https://news.un.org/ru/story/2020/09/1386592>
 22. <https://rg.ru/2019/10/14/nazvany-nobelevskie-laureaty-2019-goda-po-ekonomike.html>
 23. <https://twitter.com/NobelPrize/status/1183681045591445504>
 24. <https://www.oxfam.org/en/our-history>
 25. <https://www.un.am/hy/p/sdgs-in-general>
 26. <https://www.un.org/sustainabledevelopment/inequality/>

ЭРИК АМБАРЦУМЯН

Кандидат экономических наук, доцент

СУСАННА МХИТАРЯН

*Ведущий специалист отдела науки АГЭУ,
соискатель кафедры международных экономических отношений*

Проявления неравномерного распределения доходов в развивающихся и развитых странах. – Проблема распределения доходов существовала на протяжении всей истории человечества. Она всегда в центре внимания различных экономистов и политологов.

В рамках исследования были изучены показатели экономического роста и распределения доходов в мире, в том числе и странах ЕАЭС. Также были затронуты последствия COVID-19 в контексте глобального неравенства.

Пандемия повлияет на экономические показатели, что приведет к изменению доходов и расходов населения, а также к увеличению уровня бедности, что, в свою очередь, окажет негативное влияние на другие социальные показатели. А соразмерный ответ на кризис и обеспечение дальнейшего развития стран, требует разработки и реализации ряда социальных программ, влияние которых трудно однозначно оценить.

Ключевые слова: *структурное изменение экономики, распределение доходов, экономический рост, индекс Джини.*

DOI: 10.52174/1829-0280_2021_1_99

JEL: F43, N30, P46

ERIC HAMBARDZUMYAN

PhD in Economics, Associate Professor

SUSANNA MKHITARYAN

*Leading Specialist of Science Division,
PhD Student of the Chair of International Economic Relations at ASUE*

Manifestations of Inequal Income Distribution in Developing and Developed Countries. – The problem of income distribution has existed throughout human history. It is always in the spotlight of various economists and political scientists.

The study examined the indicators of economic growth and income distribution in the world, including the EAEU countries. The impact of COVID-19 in the context of global inequality was also mentioned. The pandemic will affect the economic indicators, which will lead to changes in income and expenditures of the population, as well as an increase in the level

of poverty, which, in turn, will have a negative impact on other social indicators. A proportionate response to the crisis and ensuring of the further development of countries requires the development and implementation of a number of social programs, the impact of which is difficult to definitely assess.

Key words: structural change in the economy, income distribution, economic growth, Gini index.

DOI: 10.52174/1829-0280_2021_1_99

JEL: F43, N30, P46